“ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ”
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՇԱԽՄԱՏԻ ՏԱՆ
ՏՆՕՐԵՆ՝ Հ. ԹԱՎԱԴՅԱՆ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՇԱԽՄԱՏԻ ՏԱՆ
½ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄՐՑԱՇԱՐԻ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մրցաշարը կանցկացվի սեպտեմբերի 8-ից 17-ը, շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով:

Մասնակցում են 2001-ից մինչև 2100 վարկանիշով, ինչպես նաև 1/4 եզրափակչից ընտրություն անցած շախմատիստները:

Ժամակարգը՝ յուրաքանչյուր մասնակցին տրվում է 90 րոպե, 30-ական վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

Հավասար միավորներ վաստակելու դեպքում տեղերը որոշվում են ըստ
ա/ հակառակորդների հատված միջին վարկանիշի /հաշվի չի առնվում ամենացածր վարկանիշով մրցակցի հետ հանդիպումը/,
բ/ սև գույնով խաղացած պարտիաների քանակի:

Խաղասկզբի համար սահմանված ժամից 15 րոպեից ավելի ուշացած խաղացողը պարտվում է: